«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՌԻՍՈՒՅԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Կրտսեր դպրոցականների իմացական կարողությունների զարգացման առանձնահատկությունները

Առարկան՝ Կերպարվեստ

Հետազոտող ուսուցիչ՝ Վարդուհի Սարգսյան

Ուսումնական հաստատություն՝ ՀՀ Արմավիրի մարզ "Արազապի Թ.Հուրյանի անվան միջն.

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն ..... **- 2 -**

Գլուխ 1. Կրտսեր դպրոցականների հուզական ոլորտի առանձնահատկությունները ..... - 5 -

1.1 Կրտսեր դպրոցականների հուզական ոլորտի առանձնահատկությունները..... **- 5 -**

Գլուխ 2. Հեռուստատեսության դերը կրտսեր դպրոցականների անձնային որակների ձևավորման գործում..... **- 9 -**

2.1. Ինֆորմացիայի փոխանցման ձևերը: ԶԼՄ-ների դերը կրտսեր դպրոցականների անձնային որակների ձևավորման գործում..... **- 9 -**

Գլուխ 3. Հետազոտական մաս..... **- 16 -**

3.1. Հետազոտության կազմակերպումը, մեթոդիկաների համառոտ բնութագիրը..... - 16 -

3.2. Հետազոտության արդյունքների մշակումն ու վերլուծություն..... - 19 -

Եզրակացություն ..... **- 22 -**

Օգտագործված գրականության ցանկ ..... **- 23 -**

Ներածություն

Հետազոտության արդիականությունը. Արդի ժամանակաշրջանում հոգեբանության կարևորագույն խնդիրներից է համարվում հեռուստատեսության ազդեցության ուսումնասիրությունը: Զանգվածային հաղորդակցման միջոցների շարքում մարդու պահանջմունքների բավարարման համար առավել մեծ են հեռուստատսության հնարավորությունները: Ժամանակից երեխաները իրենց օրվա մեծ մասը անց են կացնում հեռուստացույցի առջև, որը հաճախ չի վերահսկվում մեծահասակների կողմից: Եթե մեծահասակները, պատանիները կամ դեռահասները ունակ են քննադատորեն գնահատել այն, ինչ առաջարկվում է նրանց դիտել հեռուստացույցով, ապա կրտսեր դպրոցականը դա անել չի կարող: Ընդ որում, ոչ միայն դիտում են, այլ կլանում և ուսումնասիրում ամեն ինչ: Հեռուստատեսության ազդեցությունը, ինչպես նաև երեխայի վրա ազդեցության բոլոր այլ ձևերը, ձևավորում են նրա հոգին և միտքը, դաստիարակում են նրա ճաշակը և տեսակետը աշխարհի նկատմամբ: Երեխաների ներաշխարհը դեռևս նոր է ձևավորվում, և այդ գործում էական է այն ամենը, ինչը նրանք ստանում են մեծահասակից՝ խաղերի, հեքիաթների, համատեղ գործունեության արդյունքում, ինչպես նաև հեռուստատեսության հաղորդումների միջոցով: Հաղորդումները, որոնք դիտում են կրտսեր դպրոցականները դրանք ոչ միայն ժամանցի, այլ նաև դաստիարակության միջոցներ են: Այն, ինչ դիտում և ընկալում են երեխաները, հիմք է ստեղծում աշխարհայացքի և անձնավորության ձևավորման համար:

Հեռուստատեսության ազդեցության հետևանքով արդի ժամանակաշրջանի կարևորագույն հիմնախնդիրներից են դառնում տեղեկատվության ահռելի քանակն ու անվերահսկելիությունը: Այս պայմաններում շարքային մարդուն դժվար է ընտրություն կատարել եղած տեղեկատվության մեջ, և հաճախ պարզապես ստիպված է վստահել որևէ աղբյուրի: Ակնհայտ է, որ ուսուցման լավագույն և կայուն միջոցը՝ անուղղակի ուսուցումն է, որը կիրառվում է պատկերային լրատվամիջոցների կողմից: Բարոյական արժեքների տարածումը, մտային կարողությունների զարգացումը, հավատքի ամրապնդումը և բարի արարքի համար խրախուսումը դրական գործառույթներ են համարվում մարդու անհատական

կյանքում, սակայն հասարակական ոլորտում մարդկային փոխհարաբերությունները և շրջապատի հետ կապեր ստեղծելը նույնպես կարող են լինել մեդիագործիչների ուշադրության կենտրոնում:

Չնայած թեմայի արդիականությանը՝ ներկայումս գիտության մեջ մասնավորապես՝ մանկավարժության և հոգեբանության, բավականին քիչ են հեռուստատեսության ազդեցությունը կրտսեր դպրոցականների անձնավորության և հուզական ոլորտի վրա խնդրին նվիրված մեթոդիկաները, խոր տեսական ուսումնասիրությունները:

Հետազոտության օբյեկտը. Հեռուստատեսության ազդեցությունը կրտսեր դպրոցականների սոցիալական ոչ համարժեք դիրքորոշումների և համոզմունքների ձևավորման վրա:

Հետազոտության առարկան. Հեռուստատեսության ազդեցությունը կրտսեր դպրոցականների մոտ հուզական ոլորտի վրա:

Հետազոտության նպատակը. Ուսումնասիրել կրտսեր դպրոցականների կողմից հեռուստահաղորդումների և մուլտֆիլմերի ընկալման և հեռուստալսարանի վրա դրանց ներգործության հոգեբանական առանձնահատկությունները, բացահայտել, թե այդ ներգործությունն ինչ ազդեցություն է ունենում կրտսեր դպրոցականների սոցիալական ոչ համարժեք դիրքորոշումների և համոզմունքների ձևավորմանը, բացասական հույզերի առաջացմանը:

Հետազոտության վարկածը: Ենթադրվում է, որ երկար ժամանակ հեռուստացույցի առջև նստելը նպաստում է կրտսեր դպրոցականների տագնապայնության մակարդակի բարձրացմանը:

Ուսումնասիրման գիտական վարկածից և նպատակից բխում են հետևյալ ***խնդիրները.***

1. Ուսումասիրել կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկությունները,
2. Պարզել կրտսեր դպրոցականների հուզական ոլորտի առանձնահատկությունները,
3. Բնութագրել ինֆորմացիայի փոխանցման ձևերը: ԶԼՄ-ների դերը կրտսեր դպրոցականների անձնային որակների ձևավորման գործում,
4. Բացահայտել հեռուստատեսության ազդեցությունը կրտսեր դպրոցականների հուզական ոլորտի վրա
5. Ուսումնասիրել մուլտֆիլմերի ազդեցությունը կրտսեր դպրոցականների տագնապայնության և ագրեսիվության մակարդակի վրա

Հետազոտության տեսական նշանակությունն այն է, որ ուսումնասիրելով հեռուստատեսության ազդեցությունը կրտսեր դպրոցականների հուզական ոլորտի

վրա թույլ կտա ընդլայնել վերջիններիս վարքի վերլուծության տեսական սահմանները:

Հետազոտության կիրառական նշանակությունն այն է, որ կրտսեր դպրոցականների ընկալման հոգեբանական առանձնահատկությունների հիման վրա հնարավոր է դառնում նախընտրությունների բացահայտումը, ինչը կարող է օգտագործվել կրտսեր դպրոցականների վարքը կանխագուշակելու համար: Ստացված արդյունքները բացահայտում են տարբեր հեռուստանախագծերի ազդեցության մակարդակը երեխաների հուզական ոլորտի վրա:

Հետազոտության համար հիմք են հանդիսացել սոցիալական ընկալման և զանգվածային հոգեբանական երևույթների վերաբերյալ հիմնարար հետազոտությունները: Օգտագործվել են ավանդական հոգեբանական և սոցիոլոգիական հետազոտության մեթոդները:

Հետազոտության մեթոդները՝ հարցում, անկետավորում, զրույց, թեստային մեթոդ:

Աշխատանքի կառուցվածքը՝ Հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, գրականության ցանկից, եզրակացությունից, հավելվածներից:

Գլուխ 1. Կրտսեր դպրոցականների հուզական ոլորտի առանձնահատկությունները

1.1 Կրտսեր դպրոցականների հուզական ոլորտի առանձնահատկությունները

Հուզականության տակ հասկացվում է էմոցիոնալ ապրումների ամբողջ համակարգը, ներառյալ տրամադրությունը, հույզերը, զգացմունքները, աֆֆեկտները, կիրքը: Փիլիսոփայությունում և հոգեբանությունում մարդու այդ սուբյեկտիվ կողմը բացատրվում է որպես կարևորներից մեկը, իսկ մոտեցումների շարքում ուղիղ հարաբերվում է մարդու անձնավորության միջուկը: Անհատական հուզական ապրումները հանդիսանում են ազգային և հասարակական փորձի կենդանի աղբյուր, հույզերի կայունությունը և ճանաչումը տեղի է ունենում հասարակական հուզական միջուկի շնորհիվ՝ բոլորին հատուկ մշակույթի նմուշներ, հուզական ստերիոտիպեր և ռեակցիաներ նրանց նկատմամբ, որոնք Ռ. Բակոմը ներկայացնում է որպես §հուզական կոմպետենտություն»: [16, էջ 707-709]

Հույզերը դրանք այն է, ինչ ապրվում է որպես զգացմունք, որը մոտիվացնում, կազմակերպում և ուղղորդում է ընկալումը, մտածողություն և գործունեությունը: Հույզերը մոտիվացնում են, նրանք մոբիլիզացնում են էներգիան, և այդ էներգիան որոշ դեպքերում սուբյեկտի կողմից ընկալվում է որպես գործողության իրականացման միտում: Հույզերը վերահսկում են մարդու ֆիզիկական ակտիվությունը և մտածողությունը՝ ուղղորդելով այն որոշակի ուղղությամբ: Հույզերը կարգավորում են, կամ ավելի ճիշտ ասած, զտում են մեր ընկալումը: Երջանկությունը ստիպում է մարդուն ընկալել աշխարհը վարդագույն ակնոցներով՝ զմայլվել սովորական կենսական երևույթներով, օրինակ դաշտային ծաղիկի բույրով, արևմուտքի տեսարանով և այլն:

Հիմնական հույզեր.

Կատեգորիաներ, որոնք բնորոշում են որպես հիմնական՝

1. Հիմնական հույզերը ունեն առանձնահատուկ նյարդային սուբտրատներ
2. Հիմնական հույզերը իրենց դրսևորում են դեմքի մկանների արտահայտիչ և յուրօրինակ կարգավորման միջոցով (միմիկա)

3. Հիմնական հույզերին հետևում են հստակ և յուրօրինակ ապրում, որը գիտակցվում է մարդու կողմից:
4. Հիմնական հույզերը առաջացել են էվոլյուցիոն-կենսաբանական պրոցեսների արդյունքում :
5. Հիմնական հույզերը ունեն մոտիվացիոն և կազմակերպչական ազդեցություն մարդու վրա, նպաստում են ադապտցիային:

Կրտսեր դպրոցականների մոտ հիմնական են համարվում հետաքրության, ուրախության, զարմանքի, տխրության, զայրութի, զզվանքի և վախի հույզերը: Ինտերպրիտացնելով որպես միմիկական դրսևորում աչքերի և գլխի շարժումները՝ այս ցուցակին կարելի է ավելացնել ամոթի զգացման հույզը: Ինչը վերաբերում է մեղքի զգացումին, ապա նրան հաճախ դասում են հիմնական հույզերի շարքին, չնայած որ նա չունի միմիկական կամ պանտոմիմիկական հստակ արտահայտում: Մեղքի զգացման, ամոթի և ամաչկոտության հույզերը համարվում են հիմնական և մարդու էության էական մասնիկ[1]:

Դպրոց հաճախելուց հետո փոխվում է երեխայի հուզական ոլորտը, ինչը պայմանավորված է գործունեության բովանդակության ընդլայնման հետ և հույզեր առաջացնող օբյեկտների թվի ավելացմամբ: Այն գրգռիչները, որոնք հուզական ազդակ են առաջացնում նախադպրոցական տարիքի երեխաների մոտ, կրտսեր դպրոցականների մոտ կարող են չառաջացնել: Չնայած որ կրտսեր դպրոցականը բուռն արձագանքում է այն իրադարձություններին, որոնք ազդում են նրանց վրա, նրա մոտ առաջացնում է անցանկալի հուզական ռեակցիաների կամային ջանքերի ճնշման ունակություն: Ինչի արդյունքում դիտվում է ապրման տարամիտում ինչպես մի, այնպես էլ մյուս ուղղությամբ: Նա կարող է չարտահայտել առաջացած հույզը, ինչպես նաև արտահայտել հույզը, որը իրականում չի ապրվել:

Կրտսեր դպրոցականի հուզական ֆոնի նկարագրություն՝

- արագ ռեակցիա իրադարձություններին և հստակ ընկալում
- անմիջականություն, սեփական ապրումների բաց արտահայտում՝ ուրախության, թախիծի, վախի, բավարարվածության կամ անբավարարվածության
- աֆֆեկտային վախի սպասում՝ ուսումնական պրոցեսի ընթացքում երեխան ունենում է վախ, որպես անհաջողության կանխազգացում, սեփական ուժերի նկատմամբ անվստահություն, խնդիրների լուծման անկարողություն

[1] Изард К. Э. “Психология эмоций”. СПб, Питер, 2006г., стр 464

- երեխան զգում է սպառնալիք՝ դասարանում և ընտանիքում իր ստատուսի նկատմամբ
- էական հուզական անկայունություն, տրամադրության փոփոխություն (կենսուրախության, կայտառության, ուրախության, անհոգության զգացում ընդհանուր ֆոնի վրա), կարճաժամկետ և բուռն աֆֆեկտների նկատմամբ տրամադրվածություն
- էմոցիածին գործոններ կրտսեր դպրոցականների համար համարվում են ոչ միայն խաղերը և տարեկիցների հետ շփումը, այլ նաև հաջողությունները ուսուցման մեջ և այդ հաջողությունների գնահատականները ուսուցչի և համադասարանցիների կողմից
- սեփական և ուրիշների հույզերն ու զգացմունքները դժվար են գիտակցվում
- այլ մարդկանց միմիկան և զգացմունքների արտահայտումը հաճախ սխալ է ընկալվում, ինչը կանխորոշում է կրտսեր դպրոցականի ոչ ադեկվատ ռեակցիան:

Բացառություն են կազմում վախի և ուրախության հիմնական հույզերը: Կրտսեր դպրոցականները ավելի լավ են հասկանում հույզերը, որոնք առաջանում իրենց ծանոթ իրավիճակներում, բայց ոչ միշտ են կարողանում ահուզական ապրումները արտահայտել բառերով: Ավելի հեշտ հասկանում են դրական հույզերը, քան բացասական: Նրանք դժվար են տարբերում վախի և զարմանքի հույզերը: Չեն ճանաչում մեղքի զգացումի հույզը:

Ուսումնական գործունեության ընթացքում, հոգեկան այլ պրոցեսների նման, փոխվում է նաև երեխաների հույզերի բնույթը: Այդ գործունեությունը կապված է համատեղ գործողություններին ներկայացվող խիստ պահանջների համակարգի, գիտակցված կարգապահության, կամածին ուշադրության և հիշողության հետ: Այս ամենը ազդում է երեխաների հույզերի վրա: Կրտսեր դպրոցական հասակի ողջ ընթացքում կարելի է նկատել հույզերի դրսևորման գործում զսպվածություն և գիտակցվածության ուժեղացում հուզական վիճակների կայունության աճ: Կրտսեր դպրոցականները արդեն կարողանում են կառավարել իրենց տրամադրությունը, իսկ երբեմն նույնիսկ քողարկել դրանք (դրանում արտահայտվում էտարիքի բնորոշ գիծը՝ հոգեկան պրոցեսների կանխամտածվածության աստիճանի բարձրացում): Կրտսեր դպրոցականները ավելի հավասարակշռված են, քան նախադպրոցականներն ու դեռահասները: Նրանց հատուկ են տևական, կայուն, ուրախ և աշխույժ տրամադրությունները: Սակայն որոշ երեխաների մոտ նկատվում են բացասական աֆեկտիվ վիճակներ: Դրանց գլխավոր պատճառը հավակնությունների մակարդակի

դրանց բավարարման հնարավորությունների միջև անհամապատասխանատվությունն է: Եթե այդ անհամապատասխանատվությունը տևական է և երեխան միջոցներ չի գտնում դրա հաղթահարման կամ թուլացման համար, ապա բացասական ապրումները կարող են պոռթկալ չար ու կատաղի արտահայտությունների և գործողությունների ձևով[2]:

Այսպիսով, դպրոց ընդունվելով փոխվում է կրտսեր դպրոցականների հուզական ոլորտի ուղղվածությունը, կապված գործունեության փոփոխության և հուզական օբյեկտների շրջանակի ընդլայնման հետ: Այն հուզական ազդակները, որոնք ռեակցիա էին առաջացնում նախադպրոցականների մոտ, կրտսեր դպրոցականի մոտ արդեն չեն գործում: Այս տարիքային շրջանի կարևոր առանձնահատկությունը համարվում է անսահման վստահությունը մեծահասակի նկատմամբ (գլխավորապես ուսուցչի), նրան ենթարկվելը և կրկնօրինակելը: Հաջորդ առանձնահատկությունը երեխաների կողմից հաջողության ձգտման դիրքորոշումն է և վարքի կամային կառավարումը: Ինքնագնահատականը և խրախուսման ձգտումը մեծ դեր են խաղում կրտսեր դպրոցականի կյանքում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այն աշակերտները, որոնք ունեցել են հաջողության հասնելու համար ուժեղ մոտիվացիա, նրանց մոտ առկա է եղել ակտիվ կամ չափավոր բարձր ինքնագնահատական: Հետևաբար, տարիքը, որը համապատասխանում է դպրոցական ուսուցման 1-4 դասարաններին, կարելի է դիտարկել որպես երեխայի անձնի բնութագրի առաջացման և ամրապնդման կարևորագույն շրջան, որը դառնալով բավականաչափ կայուն, որոշում է նրա հուզական վիճակը գործունեության տարբեր տեսակների ընթացքում:

[2] Ա. Վ. Պետրովսկու խմբագրությամբ §Ընդհանուր հոգեբանություն¦ Լույս հրատարակչություն Երևան-1977, էջ-125

Գլուխ 2. Հեռուստատեսության դերը կրտսեր դպրոցականների անձնային որակների ձևավորման գործում

2.1. Ինֆորմացիայի փոխանցման ձևերը: ԶԼՄ- ների դերը կրտսեր դպրոցականների անձնային որակների ձևավորման գործում

Փոխազդեցության ձևը կապված է այն միջոցներից, որոնք օգտագործվում են մարդկանց հասարակական հաղորդակցման գործունեության ոլորտներում՝ որպես արտաքին միջավայրի ,այլ մարդկանց հետ փոխգործունեության երեք ծրագրերից մեկը: Մարդու գործունեության ոլորտները դիֆերենցվում են, առաջին հերթին, կապված մարդու կենսագործունեության ուղղվածության կամ ընդհանուր նպատակի փոփոխությունից:Այսպես, մարդու գործունեության ընդհանուր նպատակի ներսում՝ սեփական անձի ստեղծման և ինչ-որ բանի ստեղծում իր անձից դուրս, իր կամ ուրիշների համար՝ կարելի է առանձնացնել նպատակների 3 խումբ՝

- նյութական և բարոյական մշակույթի արժեքների ստեղծում,
- գիտելիքի ընդունում, կուտակում,
- ընկալում և մտքերի փոխանակում:

Առաջին երկու խմբերի նպատակների իրագործվում է ընդհանուր հոգևոր պահանջմունքի բավարարման համար: Հետևաբար պայմանականորեն սահմանվում են 3 փոխկախկապակցված և փոխհամաձայնեցված գործունեության ոլորտներ՝ հասարակական-արդյունաբերական, կրթական և հասարակական-կոմունիկատիվ: Նմանատիպ գործունեության ձևեր է առաջ քաշում Բ.Գ.Անանևը, այս հարցին մոտենալով, հիմնվելով սուբյեկտի ստրուկտուրայի տեսանկյունին: Համաձայն որի՝ մարդու մեջ աշխատանքի, իմացության և հաղորդակցման համակարգումը որոշում է մարդու ընդհանուր համակարգը որպես գործունեության սուբյեկտ և անձնավորություն:

Հաղորդակցման սուբյեկտը կրում է իր սեփական ֆունկցիոնալ բեռնվածությունը և դիտարկվում է որպես հաղորդակցման տարբեր ֆունկցիաների սկզբնական իրագործող: Այսպես, համաձայն Ա.Ա.Բրուդնիի կոմունիկացիայում (հաղորդակցման մեջ) կարող են ընդգծվել երեք սկզբնական ֆունկցիա՝ *ակտիվացնող*(դրդում է գործողության), *ինտերդիկտիվ* (արգելում՝ կարելի է- չի կարելի),

ապակայունացնող(սպառնալիքներ, վիրավորանքներ), և հաղորդակցման 4 հիմնական ֆունկցիաներ՝ *ինստրումենտալ*(հաղորդակցման միջոցով գործունեության ուղղորդում), *սինդիկատիվ*(խմբի միասնականության ստեղծում), *ինքնաարտահայտում, տրանսլյացիոն*:Վերջինը մեծ հետաքրքրություն է առաջացրել մանկավարժական հաղորդակցման համար, քանի որ §այդ ֆունկցիան ընկած է կրթության հիմքում, հաղորդակցման միջոցով է տեղի ունենում անձնավորության ուսուցումը, ինչպես ինստիտուտացիոն, լիազորված և պետության կողմից կազմակերպված, այնպես էլ անհատական, ոչ ֆորմալ ուսուցումը, որը տեղի է ունենում մարդկանց հետ հաղորդակցման պրոցեսում, որոնք կարող են տվյալ անձին փոխանցել իրենց հմտություններն ու ունակությունները[3]:

Հաղորդակցման ֆունկցիաների առավել մանրամասն վերլուծությունը հնարավորություն է տալիս տարբերակել կոնտակտային, ինֆորմացիոն, դրդող, համակարգող, ընկալման ֆունկցիան, էմոտիվ ֆունկցիան, կապի ստեղծման և ազդեցության ֆունկցիան (Լ.Ա.Կարպենկո): Ուսումնասիրելով վերբալ հաղորդակցումը՝ Ռ. Յակոբսոնը առանձնացրեց հաղորդակցման հիմնական վեց ֆունկցիաներ, որոնք էականորեն լրացնում են լեզվի երեք հիմնական ֆունկցիան, որոնք դեռ 40-ական թթ առանձնացրել էր Ն.Ս.Տրուբեցկին (էկսպլիկատիվ, ապելյատիվ, էկսպրեսսիվ): Ըստ Յակոբսոնի՝ խոսքի հիմնական ֆունկցիաներն են՝

1. *Էմոտիվ* (էքսպրեսիվ, աֆֆեկտիվ)՝ խոսացողի վերաբերմունքը լսողի նկատմամբ (§Ցավում եմ, ինչպիսի անհաջողություն¦, §Նորից անձրև եկավ¦):
2. *Կոնատիվ*՝ խնդրանք, հրաման, որը հասցեագրվածին դրդուն է գործողության:
3. *Ռեֆերենցիոն* (կոգնիտիվ, նշող)՝ մտքերի արտահայտում:
4. *Հեղինակային* (դերասանական)՝ իրականի և մտածածի սահմանազատում:
5. *Ֆատիկային*՝ հաղորդակցման պահպանում (օրինակ՝ §Ալլո՞¦,§ինչպե՞ս եք¦)
6. *Մետալեզվական*՝ սեփական արտադրությունների վերահսկում, ճշտում:

Խոսքային ֆունկցիաները այլ կերպ է նկարագրում Մ.Խոլլիդեյը: Հետևելով իր տղայի խոսքի զարգացմանը, նա առաջ քաշեց խոսքային վարքի 6 ֆունկցիա՝

[3] Обхуова Л. Ф. “Возрастная психология” Москва «Издательство Юрайт» 2011; 458 стр

ինստրումենտալ (նյութական պահանջմունքների բավարարում), կարգավորող (շրջապատի մարդկանց վարգի վերահսկում), փոխգործող (կոնտակտի պահպանում), անձնական (սեփական անձին պահանջների ներկայացում), էվրիստիկ կամ որոնողական (ինչո՞ւ), երևակայական(ներքին աշխարհ), ինֆորմատիվ (նոր ինֆորմացիայի հաղորդում): Ակնհայտ է խոսքային ֆունկցիաների բազմակողմանիությունը: Կարևոր է այն,որ նրանք լայն կիրառվում են մանկավարժական հաղորդակցման ինտերպրիտացիաների ժամանակ, արտացոլելով կոմունիկատիվ փոխգործողության տարբեր կողմերը[4]:

Երբ խոսքը վերաբերվում է ինֆորմացիայի փոխանցման ձևերին, ապա առանձնացնում են անմիջական անձնային հաղորդակցում, համընդհանուր և ինքնաբուխ: Համընդհանուր, որին այլ կերպ անվանում են նաև հիմնական, դա հատուկ պատրաստված հայտարարությունների սիստեմատիկ տարածումն է տեխնիկական միջոցների օգնությամբ, որոնցից են ռադիոն, հեռուստատեսությունը, թերթը և համացանցը[5]:

Զանգվածային հաղորդակցման միջոցները ժամանակակից հասարակական կյանքի անբաժան մասն են դարձել: Որոշակիորեն սոցիալական վերահսկողություն և կառավարում իրականացնելով՝ ԶԼՄ-ն ազդում է հասարակական կարծիքի ձևավորման վրա, տարածում գիտելիքներ, փորձ ու մշակութային արժեքներ, ազգաբնակչության ամենալայն խավերին տեղեկատվություն մատուցում, կատարում հասարակական հարաբերությունների աջակցման ու ամրապնդման կարևորագույն գործառույթներ և այլն:

Իսկ եթե խոսենք ԶԼՄ-ների բովանդակության մասին, պետք է ասենք, որ նշված տեսությունները ինչ-որ չափով համապատասխանում են իրողությանը: Հեռուստասերիաները և այլ հաղորդումները լի են բրտություններով, անբարոյականության և թմրանյութերի օգտագործման տեսարաններով: Փոխվել է հասարակության ավանդական մշակույթի դիմագիծը: Մարդիկ մտերմիկ զրույցի փոխարեն, որը կարող է օգնել հուզական կապերի ամրապնդմանը, կապ են հաստատում էլեկտրոնային ապրանքների հետ և մենության մեջ հեռուստատեսային կամ արբանյակային հաղորդումներ են դիտում: Ֆուկոյամայի մեկնաբանությամբ, արդիական կյանքի որակի ու բարոյականության սահմանափակման պատճառով,

---

[4]Обхуова Л. Ф. “Возрастная психология” Москва «Издательство Юрайт» 2011; 458 ст

[5] Толипова Ш. Ш. “Влияние эмоционального фактора в рекламном тексте” // Молодой ученый. 2015г., №4. , С. 707-709.

հետզհետե մեծ փլուզման ականատես ենք լինելու, որը տեղի է ունենալու հասարակության բոլոր կառույցների, հատկապես ընտանիքի բարոյական դաշտում: Հետազոտությունները պարզել են, որ ԶԼՄ-ները մեծ դեր են ունեցել երիտասարդների մոտ կոպտության ու ագրեսիվության տարածման մեջ: Քանզի գեղեցիկ ու գունազարդ գովազդներով, հանգիստ ու վայելուչ կյանք են պրոպագանդում, իսկ դա այն դեպքում, երբ դրանք հասանելի են ոչ բոլորի համար: Արդյունքում, անջրպետ է առաջանում նպատակի և ձեռքբերման միջոցների միջև և անհատի մոտ զրկվածության զգացում է առաջանում, ինչի հետևանքն էլ ագրեսիվությունն ու կոպտությունն է:

Մյուս կողմից, դետեկտիվ ֆիլմերի ցուցադրումը, բացասական հույզեր է առաջացնում: Անգամ սպանությունների և հանցագործության միջոցների մասին լուրերի հրապարակումը, հասարակության մոտ այդ միջոցների տարածմանը կարող է հանգեցնել:

Հեռուստատեսության մյուս ազդեցություններն են՝ մոտեցումների և արդյունքում, կենսակերպի փոփոխությունը և դրան համապատասխան նորմերի ձևավորումը: Հետևաբար, մեդիայում անպարկեշտ կադրերի ցուցադրումը, սեռական հանցագործությունների տարածման պատճառ են դառնում:

ԶԼՄ-ների նպատակները կարելի է մի քանի խմբերի բաժանել՝ տեղեկատվությունը, ուսուցանումն ու դաստիարակումը, մշակութային ենթահող պատրաստելը և ժամանցի ապահովումը: Բոլորս էլ գիտենք, որ ուսուցման լավագույն և կայուն միջոցը՝ անուղղակի ուսուցումն է, որը կիրառվում է պատկերային լրատվամիջոցների կողմից: Բարոյական արժեքների տարածումը, մտային կարողությունների զարգացումը, հավատքի ամրապնդումը և բարի արարքի համար խրախուսումը դրական գործառույթներ են համարվում մարդու անհատական կյանքում, սակայն հասարակական ոլորտում մարդկային փոխհարաբերությունները և շրջապատի հետ կապեր ստեղծելը նույնպես կարող են լինել մեդիագործիչների ուշադրության կենտրոնում:

Այսպիսով, մենք ագրեսիվ վարքագիծ ենք յուրացնում ոչ միայն սեփական փորձի արդյունքում տեսնելով, որ ագրեսիան կարող է դրական արդյունք ունենալ, այլև այլոց ագրեսիվ վարքը դիտելով, կրկնօրինակելով: Ագրեսիան մենք սովորում ենք այլ սոցիալական ունակությունների նմանությամբ: Բոլոր այն անձինք, որոնք որոշակի խմբի (երեխաներ, պատանիներ կամ երիտասարդներ) համար հեղինակություն են հանդիսանում, դառնում են տվյալ խմբի համար կրկնօրինակման մոդել: Ագրեսիայի կրկնօրինակման հիմնական մոդելներն են *ենթամշակույթները, լրատվամիջոցները և ընտանիքը* :Այս պատճառով հանրության առողջ զարգացման

համար վտանգավոր է լրատվամիջոցներում ագրեսիվ, ապասոցիալական, անբարոյական սոցիալական մոդելների առկայությունը: Հեռուստատեսության դարաշրջանում այդպիսի բացասական սոցիալական մոդելներ կարող են լինել այսպես կոչված աստղերը կամ շոու-բիզնեսի այլ ներկայացուցիչներ, բացասական վարքով մարզիկները կամ քաղաքական գործիչները և ընդհանրապես նրանք, ովքեր հայտնի են հանրությանը, սակայն տվյալ հանրության զարգացումն ապահովող հոգևոր, մշակութային արժեքների կրողներ չեն:

Հետազոտությունների արդյունքները վկայում են որ, հեռուստացույցի հաճախակի և երկարատև դիտումը բացասաբար է ազդում երեխաների ընդհանուր ֆիզիոլագիական և հոգեկան զարգացման վրա: Նշվում է, որ այն փոխարինում են այդ տարիքում անհրաժեշտ կոնկրետ-հուզական փորձի յուրացմանը, խանգարում են մոտորիկայի, խաղի և խոսքի զարգացմանը: Քանի որ երեխաները չեն կարողանում տարբերակել ճիշտ ինֆորմացիան սխալից, չեն կարողանում քննադատաբար մտածել, ապա ամբողջ ինֆորմացիան նրանց կողմից անգիտակցաբար յուրացվում է: Դրա արդյունքում կրտսեր դպրոցականները ունեն շրջապատի բավականին խեղաթյուրված պատկեր, որի վրա ներգործում են միաժամանակ էվոլյուցիայի ուժերը, Աստված, կախարդները, այլմոլորակայինները և մոլորակների դասավորվածությունը:

Ինչպե՞ս են մուլտֆիլմի բացասական տեսարաններն ազդում երեխայի անձնային-հուզական ոլորտի զարգացման վրա:

- Ագրեսիվության տեսարան. Մուլտֆիլմի գլխավոր հերոսներն ագրեսիվ են, նրանք նպատակաուղղված են վնաս պատճառել շրջապատին, հարվածում կամ սպանում են մյուս հերոսներին, ընդ որում, նման ագրեսիվ վարքային դրսևորումների մանրամասները, ագրեսիվ վերաբերմունքը բազմակի կրկնվում է, մանրամասնորեն ներկայացվում:

  Ազդեցությունը և հետևանքները. Երեխաների մոտ սկսում է արտահայտվել դաժանություն, անխղճություն, անհիմն չարություն, և իրական կյանքում երեխան դառնում է ագրեսիվ:
- Դևիանտ (հասարակական նորմերից շեղվող) տեսարան- Ամենաթողության և ամենակարելիության գաղափարախոսություն: Նման տեսարաններում ոչ ոք մուլտֆիլմի հերոսին չի սովորեցնում կանոնակարգություն, չի տարանջատում կարելի և ոչ կարելի գործողությունները: Վատ հերոսները մնում են անպատիժ, քանի որ չկա հստակեցում՝ ի՞նչն է լավ, ի՞նչը՝ վատ:

Ազդեցությունը և հետևանքները. Երեխայի մոտ ամրապնդվում է բացասական վարքի անպատժելիության պատկերացում, վերանում են սահմանափակումները: Լավ և վատ, հանդուրժելի և անհանդուրժելի արարքները չեն տարանջատվում: Ձևավորվում է ամենակարելիության կարծրատիպ:

- Երեխայի կյանքի համար վտանգ պարունակող վարքային տեսարաններ. նման տեսարանների կրկնօրինակումը ողջամտությունից հեռու է, աննպատակ և վտանգավոր:

  Ազդեցությունը և հետևանքները. երեխաների մոտ նկատվում է հակում հերոսի, որտեղ հերոսները դրսևորում են իրենց սեռին ոչ համապատասխան վարք. սեռադերային վարքի, պարտականությունների, տեսքի միախառնում:

  Ազդեցությունը և հետևանքները. երեխայի մոտ ձևավորվում են ոչ ադեկվատ պատկերացումներ սեռադերային համապատասխան վարքի վերաբերյալ, ինչպես նաև սեռային նույնականացման աղճատում: Երեխան հստակ չի պատկերացնում տղամարդու և կնոջ վարքային առանձնահատկությունները, վարքային կանոնները, դերային պարտականությունները:

- Տեսարան, որտեղ առկա է մարդկանց, կենդանիների և բույսերի հանդեպ անհարգալից վերաբերմունք: Նման տեսարաններում անպատժելի է մնում ծաղրանքը՝ ուղղված ծերությանը, անօգնականությանը, թուլությանը, անկարողությանը:

  Ազդեցությունը և հետևանքները. բացասական վերաբերմունք ծանոթ մեծահասակների և հասակակիցների հանդեպ: Անվանարկումներ՝ ուղղված մեծերին, անընդունելի վարք և վերաբերմունք պարունակող ժեստեր, կոպտություն, անխղճություն: Ձևավորվում է արժեքային համակարգի բացակայություն, եսասիրություն, դաժանություն:

- Տգեղ և անհրապույր տիկնիկ-հերոսներով լի տեսարաններ. երեխայի համար մուլտ-տիկնիկների արտաքինն ունի առանձնահատուկ կարևորություն: Դրական կերպարները պետք է լինեն գեղեցիկ, նույնիսկ գրավիչ, իսկ բացասական կերպարները՝ ընդհակառակը: Շատ հաճախ բոլոր կերպարները՝ առանց բացառության, լավ թե վատ, շատ տգեղ և տձև մարմնակառուցվածք ունեն:

  Ազդեցությունը և հետևանքները. երեխայի մոտ բացակայում է հերոսի կերպարը, վարքը և վերաբերմունքը ճիշտ գնահատելու ունակությունը: Չի կարողանում տեսողական տարանջատել լավ և վատ կերպարները:

- Համբուրվող արքայադստեր և արքայազնի տեսարան. իրականում նմանատիպ տեսարաններն անընդունելի են երեխայի նոր ձևավորվող հոգեկանի համար: Կերպարները համբուրվում են, մտերմանում և իրենց բոլոր վարքային

դրսևորումներով սեռական հարաբերություններ են ակնարկում: Մուլտարտադրողներն ամեն տարի ավելի են մերկացնում և մարմնակառուցվածքով ավելի գրավիչ դարձնում արքայադուստրերի կերպարները:

Ազդեցությունը և հետևանքները. աղջիկ երեխաները նման կերպարների հիման վրա ձևավորում են պատկերացում սեփական մարմնի կառուցվածքի մասին և շատ են վշտանում, երբ իրենց և սիրելի մուլտ-գեղեցկուհու կառուցվածքները չեն համապատասխանում: Հետևանքները շատ մտահոգիչ են, քանի որ աղջիկներն այս ամենի հիմքում դառնում են ներամփոփ, իսկ տղաները սիրահարվում են միայն անիրական գեղեցկուհիներին: Տեղի է ունենում իրականության աղճատում, որը հետագայում կարող է ամրապնդվել և մարդուն ուղեկցել ամբողջ կյանքի ընթացքում:

Գլուխ 3. Հետազոտական մաս

3.1. Հետազոտության կազմակերպումը, մեթոդիկաների համառոտ բնութագիրը

Հետազոտության նպատակն է պարզել, թե կրտսեր դպրոցականները ինչքան ժամանակ են անցկացնում հեռուստացույցի առջև, և բացահայտել վերջինիս ազդեցությունը հուզական ոլորտի վրա:

Նպատակին հասնելու համար առաջադրված հետևյալ խնդիրները.

1. Պարզել երեխաների հեռուստահաղորդումների դիտման ժամաքանակը և նախապատվությունները (ժամանցային, սերիալներ և մուլտֆիլմեր)
2. Հետազոտել նրանց կողմից նախընտրած հեռուստածրագրերի ազդեցությունը հուզական ոլորտի վրա
3. Բացահայտել հեռուստացույց դիտելու ժամաքանակի և հուզական ոլորտում արտահայտված տագնապայնության մակարդակի բարձրացման միջև կապը

Որպես հետազոտման օբյեկտ ընտրել ենք 6-10 տարեկան կրտսեր դպրոցականներին, որոնցից կեսը աղջիկներ են, իսկ մյուս կեսը՝ տղաներ:

Աղյուսակ 1. Հետազոտության խմբի սեռը և տարիքը

	Տարիքը					Սեռը	
	6	7	8	9	10	Ա	Ի
Քանակը	5	14	16	25	15	41	34
%	6.6	18.6	21.3	33.3	20	54.7	45.3

Այսպիսով, հետազոտության խմբի մեջ են մտել 6-10 տարեկան կրտսեր դպրոցականներ, որոնց հիմնական մասը կազմում էին տղաները՝ 54.7 %, խմբի համեմատաբար փոքր մասը՝ 45.3%, կազմում էին աղջիկները: Փորձարկվող կրտսեր դպրոցականների միջին տարիքը կազմում է 8 տարեկան:

Հետազոտության նպատակի իրագործման և առաջադրած խնդիրների լուծման համար օգտագործվում են հետևյալ դիագնոստիկ մեթոդները `

1. Անկետա
2. Թեստային մեթոդ
3. Զրույց

Կիրառված մեթոդիկաներն են.

1. Անձնային և իրադրային տագնապայնությունը հետազոտող հարցարան՝ ըստ Չ. Դ. Սպիլբերգի:

Հետազոտության փուլերը: Հետազոտությունը կատարվել է հետևյալ փուլերով՝

1-ին փուլում 60 կրտսեր դպրոցականների և իրենց ծնողների հետ իրականացվել է հարցում, որի արդյունքում պարզ է դարձել, թե կրտսեր դպրոցականները ինչ են հաճախակի դիտում հեռուստացույցով:

2-րդ փուլում հետազոտել նրանց կողմից նախընտրած հեռուստածրագրերի բովանդակային կողմը և վերլուծել դրանց հնարավոր ազդեցությունը կրտսեր դպրոցականների հուզանկան ոլորտի՝ մասնավորապես տագնապայնության մակարդակի վրա:

3-րդ փուլում կրտսեր դպրոցականներից բաղկացած խմբի հետ իրականացնել Չ. Դ. Սպիլբերգի կողմից մշակված հարցարանը

4-**րդ փուլում** տեղի է ունեցել ստացված արդյունքների ընդհանրացում, վերլուծություն և մեկնաբանում, որի հիման վրա ձևակերպվել են համապատասխան եզրակացություններ և մեթոդական ցուցումներ:

Անձնային և իրավիճակային տագնապայնության հետազոտում ¥Չ. Դ. Սպիլբերգի հարցարան¤

Տագնապայնության, որպես անձի հատկանիշի որոշումը հատկապես կարևոր է, քանի որ այդ հատկությունը մեծ չափով պայմանավորում է սուբյեկտի վարքը: Տագնապայնության որոշակի մակարդակը անձի ակտիվ գործունեության բնական և պարտադիր առանձնահատկություն է: Յուրաքանչյուր մարդու մոտ գոյություն ունի տագնապայնության սեփական օպտիմալ կամ ցանկալի մակարդակ՝ դա այսպես կոչված օգտակար տագնապայնությունն է: Մարդու կողմից իր վիճակի գնահատումը այդ առումով նրա համար ինքնավերահսկման և ինքնադաստիարակման էական բաղադրիչ է:

Անձնային տագնապայնություն ասելով կարելի է հասկանալ կայուն անհատական բնութագիր, որն արտացոլում է սուբյեկտի նախատրամադրվածությունը տագնապին և ենթադրում է նրա մոտ իրավիճակի բավական լայն սպեկտրը սպառնալի ընկնելու նախատրամադրվածությունը: Որպես նախատրամադրվածություն անձնային տագնապայնությունն ակտիվացնում է որոշակի խթանների ընկալման դեպքում, որոնք մարդու կողմից գնահատվում են որպես վտանգավոր, որոնք կապված են նրա հեղինակության, ինքնագնահատականի, ինքնահարգանքին սպառնացող սպեցիֆիկ իրավիճակների հետ: Իրավիճակային կամ ռեակտիվ տագնապայնությունը որպես վիճակ բնութագրվում է սուբյեկտիվորեն վերապրվող հույզերով՝ լարվածությամբ, նյարդայնությամբ: Այդ վիճակը ծագում է որպես հուզական ռեակցիա սթրեսային իրավիճակի նկատմամբ և կարող է ունենալ տարբեր ինտենսիվություն և դինամիկություն ժամանակի ընթացքում:

Տագնապայնության չափման հայտնի մեթոդների մեծամասնությունը թույլ է տալիս գնահատել կա՛մ միայն անձնային տագնապայնությունը, կա՛մ տագնապայնության վիճակը, կա՛մ էլ ավելի սպեցիֆիկ ռեակցիաներ: Միակ մեթոդիկան, որը թույլ է տալիս տարբերակված գնահատել տագնապայնությունը և՛ որպես անձնային հատկություն, և՛ որպես վիճակ, Չ. Դ. Սպիլբերգի առաջարկած մեթոդիկան է:

Հետազոտության նպատակը. Անձնային և իրավիճակային տագնապայնության մակարդակների գնահատումն է:

Ապահովումը. Սպիլբերգի ինքնագնահատականի սանդղակի բլանկ, որը ներառում է հրահանգներ և 40 հարց-դատողություններ, որոնցից 20-ը նախատեսված են իրավիճակային տագնապայնության մակարդակի գնահատման համար:

Աշխատանքի ընթացքը. Հետազոտությունը կարող է անցկացվել ինչպես անհատական, այնպես էլ խմբում: Փորձը կատարողը փորձարկվողներին առաջարկում է պատասխանել սանդղակների հարցերին հրահանգների համաձայն, որոնք տեղադրված են հարցարանում և հիշեցնում է, որ փորձարկվողները պետք է ինքնուրույն աշխատեն: Յուրաքանչյուր հարցի համար հնարավոր են պատասխանի 4 տարբերակներ ինտենսիվության աստիճանին համապատասխան:

Արդյունքների մշակում.

1. Իրավիճակային և անձնային տագնապայնության ցուցանիշների որոշումը բանալու օգնությամբ:
2. Տագնապայնության մակարդակի գնահատականի հիման վրա ցուցումների կազմում փորձարկվողի վարքի շտկման նպատակով:

Ինքնագնահատականի արդյունքների վերլուծության ընթացքում պետք է հաշվի առնել, որ ընդհանուր վերջնական ցուցանիշը, այնքան տագնապայնության ¥իրավիճակային և անձնային¤ մակարդակը բարձր է: Ցուցանիշները մեկնաբանելիս կարելի է օգտագործել տագնապայնության հետևյալ կողմնորոշիչ գնահատանները՝ մինչև 30 միավոր՝ ցածր, 31-44 միավոր՝ չափավոր, 45 և ավելի՝ բարձր: Խմբի հետազոտման արդյունքներով եզրակացություն է գրվում, որը ընդհանուր առմամբ գնահատում է խումբը ըստ իրավիճակային և անձնային տագնապայնության:

3.2. Հետազոտության արդյունքների մշակումն ու վերլուծություն

Հետազոտության նպատակի իրագործման և առաջադրած խնդիրների լուծման համար օգտագործվում են հետևյալ դիագնոստիկ մեթոդները ՝ Երեխաների հեռուստահաղորդումներ դիտելու ժամաքանակի և նախապատվությունների(ժամանցային, սերիալներ և մուլտֆիլմեր) բացահայտման համար, ինչպես նաև դիտված մուլտֆիլմներից առաջացած հուզական արձագանքի բացահայտման համար մշակվել է ծնողների համար անկետա (դիտել 1 հավելվածը) և կրտսեր դպրոցականների համար անկետան: Հետազոտության մասնակից դարձան կրտսեր դպրոցական տարիքի երեխաները (12 մարդ), նրանց ծնողները և դաստիարակները:Հետազոտությունները ունեցան հետևյալ արդյունքները: Մասնակցած 12 կրտսեր դպրոցականներից ծնողները կամ դաստիարակները անկետայի հարցերին պատասխանեցին հետևյալ կերպ՝ 《ինչպիսի՞ մուլտֆիլմեր են սիրում դիտել ձեր երեխան》: 56%-ը պատասխանեց `արտասահմանյան մուլտֆիլմեր, 14%-ը ՝ ռուսական, 30%-ը ՝ զվարճեցնող: 《Արդյո՞ք սահմանափակում եք դիտումների քանակը》-հարցին 33%-ը պատասխանեց որ սահմանափակում է, 67%-ը `ոչ: Հետևյալ պատասխաններից կարելի է ենթադրել, որ ծնողները կարծում ենմ թե իրենց երեխաները նախապատվությունը տալիս են արտասահմանյան մուլտֆիլմներին: Մեծահասակները այս պրոցեսում պասիվ դեր են ստանձնում, չարտահայտելով սեփական կարծիքը: Երեխաներն էլ, իրենց հերթին, ինքնուրույն են որոշում՝ որ հերոսն է նմանակում՝ կրկնելով նրանց վարքն ու գործողությունները: Երեխաների հետ զրույցի ժամանակ պարզվել է, որ երեխաների 48%-ը սիրում են արտասահմանյան մուլտֆիլմեր դիտել, 37%-ը՝ ծիծաղեցնող, 15%-ը՝ ռուսական: Համեմատելով երեխաների և ծնողների պատասխանները կարելի է եզրակացնել,

որ ընդհանուր առմամբ ծնողները հասկանում են իրենց երեխայի նախասիրությունները , բայց աննշան չափով վերահսկում են մուլտֆիլմերի ընտրությունը և դիտման ժամանակը:

Տագնապայնության թեստի անալիզը ցույց տվեց, որ 4% երեխաների մոտ տագնապայնության ցածր մակարդակ է, իսկ միջին և բարձր մակարդակ ունեն հավասարապես 48% յուրաքանչյուրը: Այս փորձից կարելի է եզրակացնել, որ բազմաթիվ երեխաներ ունեն տագնապայնության բարձր մակարդակ: Հարցումների ժամանակ պարզ դարձան նաև երեխաների ամենասիրելի մուլտֆիլմների անվանումները Հետազոտությունը անցկացնելով 65 կրտսեր դպրոցականների հետ, որոնցից 41-ը տղա էին, իսկ 34-ը աղջիկ, ստացանք հետևյալ արդյունքները:

Առաջին կիրառված մեթոդիկայի՝ Լյուշերի գունային նախընտրությունների մեթոդիկայի վերլուծության արդյունքում պարզ դարձավ.

- կրտսեր դպրոցականների 65-ից 26-ի մոտ առկա էր մեծ երջանկության սպասման կամ հույսի մասին, նորի, բայց դեռ չձևավորածի ձգտում: Լի կյանքով ապրելու ձգտում, առաջնորդի գծեր, ստեղծագործական մասնիկ, բուռն գործողություն:
- 15-ի մոտ նկատվում է միջինից բարձր տագնապայնության մակարդակ, հույզերն անկայուն են, առկա է հուզական և ֆիզիոլոգիական գերլարվացություն,
- 13-ի մոտ առկա է զգացմունքների հանդարտություն, կարեկցելու կարողության, գեղագիտական հայեցողականության հակվածություն, վստահությունը, ինքնազոհությունը, հավատարմությունը,
- 7-ի մոտ առկա է մեծ քանակի կենսական ուժ, նյարդային և հումորալ ակտիվություն, հաջողության ձգտման և բոլոր կեսաբարիքների ցանկության արտահայտում: Հաղթանակի հասնելու կամք:
- 4-ի մոտ կար բողոք, էքստրեմալ տիպի փոխհատուցող վարք:

Որպեսզի պարզենք, թե ինչքանով է հեռուստատեսությունը ազդում երեխաների մոտ առկա հուզական շեշտվածության վրա, նախ և առաջ իրականացվել է հարցման մեթոդը, որից պարզ է դարձել կրտսեր դպրոցականների հեռուստահաղորդումների հետևյալ նախապատվությունները:

աղյուսակ 2-ում


Աղյուսակ 2
դիտումների քանակը
24%
23%
21%
11%
7%
5%
4%
2%
1%
1%
1%
Թռիչք
Մաշան և աղջը
Ֆուլ հաուս
Դոմինո
Մեքոժվածը
Քարե դարդ
Տոմը և ջերին
Տանը մենակ
Սոֆիա...
Ղե՛, սպասիր
Սահմանին


ÊÙµÇ ÇñuíÇ×uÏu»ÇÝ ¯Ïu·ÝuåuÛÝáõÃÛuÝ
ÙuÏuñ¹uÏÇ ·ÝuhuÏáõÙÁ ÙÇÝã
ëÇÙíáÉ¹ñuÙuÏÇÏuÏuÝ ë»uÝëÝ»ñÇ
uÝóÏuóáõÙÁ
6,7
43,3
50
µuñÓñ
ãu÷uíáñ
óuÍñ


ÊÙµÇ uÝóÝuÛÇÝ ¯Ïu·ÝuåuÛÝáõÃÛuÝ
ÙuÏuñ¹uÏÇ ·ÝuhuÏáõÙÁ ÙÇÝã
ëÇÙíáÉ¹ñuÙuÏÇÏuÏuÝ ë»uÝëÝ»ñÇ
uÝóÏuóáõÙÁ
0
36,7
63,3
µuñÓñ
ãu÷uíáñ
óuÍñ

Եզրակացություն

Մեր կողմից իրականացված տեսական և գործնական հետազոտությունը, որի նպատակն էր ուսումնասիրել կրտսեր դպրոցականների տարիքային և հուզական ոլորտի առանձնահատկությունները, պարզել հեռուստահաղորդումների և մուլտֆիլմերի ընկալման և հեռուստալսարանի վրա դրանց ներգործության հոգեբանական առանձնահատկությունները, թույլ է տալիս գալ հետևյալ եզրահանգումների.

1. Կրտսեր դպրոցական տարիքը կյանքի կարևորագույն փուլերից մեկն է, որից է կախված մտածողության և անձնավորության մակարդակը, սովորելու ցանկությունը և կարողությունը, սեփական ուժերի նկատմամբ հավատը: Սոցիալական կարգավիճակի փոփոխության արդյունքում երեխան դուրս է գալիս ընտանիքի սահմաններից՝ ընդլայնելով հաղորդակցման շրջանակը:
2. Տեսական վերլուծությունը, որը կատարվել է մեր կողմից երկրորդ գլուխում, ցույց է տալիս, հեռուստացույցի հաճախակի և երկարատև դիտումը բացասաբար է ազդում երեխաների ընդհանուր ֆիզիոլագիական և հոգեկան զարգացման վրա:

Վերլուծելով հետազոտության արդյունքները՝ ծնողներին, դաստիարակներին, ուսուցիչներին, առհասարակ բոլոր այն անձնանց, ովքեր առնչվում են երեխաների հետ խորհուրդ է տրվում.

1. առավել ուշադիր լինել հեռուստահաղորդումների ընտրության հարցում,
2. խստիվ արգելել մինչև 3 տարեկան երեխաներին մուլտֆիլմերի դիտումը,
3. հաշվի առնել հեռուստահաղորդումների տարիքային սահմանափակումը և տևողությունը

Այս խորհուրդների ծանոթացումը ավելի նպատակահարմար է կատարել թեմատիկ ծնողական ժողովների ժամանակ՝ զրույցի միջոցով.

Օգտագործված գրականության ցանկ

1. Բալյան Ա.Ա §Մանկավարժական հոգեբանության հարցեր. - Երևան: Լույս, 1983
2. Զանգվածային լրատվության մասին ՀՀ օրենքը, հոդված 3 (ՀՕ-14, 13. 12. 2003 թ.)
3. Թոֆլեր Է., §Գիտելիքն ու իշխանությունը տեղեկատվական հասարակության մեջ¦ Երևան, 2006 թ., էջ 26:
4. Ա. Վ. Պետրովսկու խմբագրությամբ §Ընդհանուր հոգեբանություն¦ Լույս հրատարակչություն Երևան-1977, էջ-125
5. Аромштам М. “Дети смотрят мультфильмы: психолого-педагогические заметки. Практика производства мультфильма в детском саду.” – Москва: Чистые пруды, 2006. — 30 с.: — Библиотечка «Первого сентября». Серия «Дошкольное образование»; вып.
6. *Бронфенбреннер У. “*Два мира детства: Дети в США и СССР”. М.: Прогресс,1976. 165 с.
7. Веккьо Ж. “Киндерсюрприз» для маркетологов: Как создать «долгоиграющий» бренд для детей.” М.: Фаир-Пресс, 2005. 256 с.
8. Зимняя И.А.. “Педагогическая психология”. 2004 "...Издательская корпорация «Логос» Москва, стр 384
9. Ивлев А. А. “Экранная культура как социализирующии феномен современного образожания” Оренбургский государственный университет, г. Оренбург
10. Изард К. Э. “Психология эмоций”. СПб, Питер, 2006г., стр 464
11. Каримова Н. И. “Телевидение как политико-коммуникативный институт формирования имиджа российских политиков” // "Казанская наука", 2010, № 8, էջ 848-851:
12. Кулагина И.Ю. “Возрастная психология: развитие ребенка от рождения до 17 лет” / Ун-т Рос. акад. образования. -- 5-е изд. - М. : Изд-во УРАО, 1999. - 175
13. Мухина В. “Возрастная психология. Феноменология развития”10-е изд., перераб. И доп. – М.:2006.- 608 с
14. Смирнова Е.О. и Лаврентьева Т.В. “Как телевидение влияет на наших на детей”
15. Обхуова Л. Ф. “Возрастная психология” Москва «Издательство Юрайт» 2011; 458 стр
16. Пацлаф Р. Застывший взгляд. М.: Evidentis, 2003. 224 с.

17. Зимняя И.А.. “Педагогическая психология”. 2004 "...Издательская корпорация «Логос» Москва, стр 384
18. Толипова Ш. Ш. “Влияние эмоционального фактора в рекламном тексте” // Молодой ученый. 2015г., №4. , С. 707-709.
19. Флинт Ж. Л. “Тележизор и наши дети” Серия «в помощь родителям» Таруса, 2012 г
20. Харрис Р. Психология массовых коммуникаций. СПб.: Прайм-Еврознак, 2002. 448 с.
21. Шаповаленко И. В. “Возрастная психология (Психология развития и возрастная психология)” Москва 2005, 350 стр
22. Эко У. “Баудолино”, С.-П., 2005, с. 576.